<u>Աշխատանքի ծածկագիր 4053</u>

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 26.11.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ Ա.Ղուկասյանի

մասնակցությամբ անդամներ՝

Հ.Պետրոսյանի

Վ.Ենգիբարյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Բողոքարկվել են քրեական դատավարություն բաժնի 3-րդ, 26-րդ, 33-րդ հարցերը:

<u>Քրեական դատավարության բաժին</u>

Հարց 3

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից գ/ տարբերակը այն է՝ *ոչ, քանի որ դատավորն արդեն իսկ մասնակցել է տվյալ գործի քննությանն այլ վարույթի (դատական վերահսկողության) շրջանակներում*, մինչդեռ

ներկայացվածներից ճիշտ տարբերակը դ-ն է, այն է՝ *ոչ, քանի որ դատավորն ունի կանխակալ կարծիք դատական քննության առարկայի (մեղադրանքի) վերաբերյալ:* Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առաջադրանքի ճիշտ տարբերակը հարցի ամբողջական և լիարժեք պատասխան է, այդ իսկ պատճառով հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել ընդունելի:

Հարց 26

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից բ/ տարբերակը, այն է՝ *անհրաժեշտություն է առաջացել պարզելու մահվան պատճառը և առողջությանը հասցված վնասի բնույթը և ծանրության աստիճանը:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 251-րդհոդվածի 1-ին մասի ձևակերպումից երևում է, որ քննիչը համաձայն չլինելով փորձագետի եզրակացության հետ՝ վերջինի ոչ լրիվ լինելու պատճառաբանությամբ **կարող է** նշանակել լրացուցիչ փորձաքննություն, հետևաբար <<կարող է>> **եզրույթը չի կարող համարվել** <<**պարտադիր**>>**:** Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Հարց 33

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից ա/ տարբերակը այն է՝ *ոչ, քանի որ օրենքով առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման բացառապես այն դեպքում, երբ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում (քր. դատ. օր-ի 309.1 հոդվածի 1-ին մաս):* Նկատի ունենալով, որ խնդրի ձևակերպումը հնարավորություն չի տալիս միանշանակ հետևության հանգելու, որ հավակնորդի կողմից տրված պատասխանը սխալ է, ուստի Հանձնաժողովը գտնում է, որ այն պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 4053 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քրեական դատավարության բաժնի 26-րդ և 33-րդ հարցերի պատասխանը գնահատել յուրաքանչյուրը 1 միավոր, ընդհանուր 2 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Հ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վ.ԵՆԳԻԲԱՐՅԱՆ